«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР (АРЦАХА): ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ОМУСА
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ
ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, ի.գ.դ., պրոֆ. **Հ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Հ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Մարգարյան**, ք.գ.դ. **Ս.Մ.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Հ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия
д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, 2016

ԾՆՈՂԻՑ ԵՐԵԽԱՅԻ ՕԳՏԻՆ ԱԼԻՄԵՆՏԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԼՂՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման բաժնի ավագ մասնագետ,
Արցախի պետական համալսարանի պատմահրավագիտության ֆակուլտետի դասախոս
tadevosyanlilit@yahoo.com

ԼՂՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետը սահմանում է՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից է հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը[1]: ԼՂՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի առաջին մասը հռչակում է՝ ընտանիքը հասարակության բնական և հիմնական հիմքն է: Սրանով ճանաչվում է ընտանիքի կարևոր դերը հասարակության և պետության մեջ: Սակայն լինում են դեպքեր, երբ ընտանիքի անդամների համատեղ կյանքը դառնում է անհնար, և ամուսինները որոշում են ամուսնալուծվել կամ վարել առանձին տնտեսություններ: Այս պարագայում հարց է ծագում՝ թե ում խնամքին պետք է մնան երեխաները և ով պետք է հոգա նրանց ապրուստը: Հարցի պատասխանը տրված է ԼՂՀ ընտանեկան օրենսգրքում[2] (այսուհետ՝ Օրենսգիրք), որի 47-րդ, 68-րդ հոդվածների համաձայն՝ երեխան … իր ծնողներից … ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունի, ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին: Իսկ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի[3] 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր և հավասար պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները … երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվությունը:

Այսպիսով, ծնողները պարտավոր են ալիմենտ տրամադրել իրենց երեխաներին: «Ալիմենտ» բառը լատիներեն ծագում ունի և նշանակում է ապրուստի միջոց, սնունդ: Ալիմենտային պարտավորությունների առաջացումը միշտ էլ վկայում է ընտանիքի անդամների միջև նորմալ ընտանեկան կապերի խախտման, ընտանիքի անդամների միջև առանձին հարցերի լուծման գործում պետական մարմինների միջամտության անհրաժեշ-

---

[1] Ընդունվել է 10.12.2006թ.: Տե՛ս ԼՂՀՊՏ 2006.12.15/32(41):
[2] Ընդունվել է 29.03.2012թ.: Տե՛ս ԼՂՀՊՏ 2012.04.21/07(197):
[3] Ընդունվել է ՄԱԿ-Ի Գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով, ուժի մեջ է մտել 1990 թվականի սեպտեմբերի 2-ին:

տության մասին[1]: Ընտանիքի անդամների կողմից իրենց զավակներին... պահելու օրենքով նախատեսված պարտականությունների կամավոր կատարման դեպքում ալիմենտային իրավահարաբերություններ չեն առաջանում[2]:

Օրենսգիրքի 69-րդ և 71-րդ հոդվածները նախատեսում են դատարանի կողմից երեխայի համար ալիմենտի վճարման 3 եղանակ՝ ծնողի վաստակից բաժնային հարաբերակցությամբ, կայուն դրամական գումարով, կայուն դրամական գումարով և բաժիններով միաժամանակ:

Ծնողի վաստակից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտ կարող է սահմանվել ցանկացած պարագայում:

Կայուն դրամական գումարով կամ կայուն դրամական գումարով և բաժիններով միաժամանակ ալիմենտ դատարանն իրավունք ունի սահմանել միայն Օրենսգրքով նախատեսված հանգամանքների առկայության պարագայում:

Սակայն, հարց է ծագում՝ ինչպես վարվել, երբ դատարանի վճռով ալիմենտ սահմանվելուց հետո ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պարագայում օրենսդրությամբ նախատեսվում է ալիմենտի վճարման այլ եղանակ:

Օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան՝ ալիմենտի չափը կայուն դրամական գումարով որոշելու... կամ **այլ եղանակով** ալիմենտ վճարելու մասին պահանջով ... եթե ալիմենտ վճարելու պարտավոր անձը մշտական բնակության համար մեկնում է օտարերկրյա պետություն: Օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ եթե ընտանիքի անդամների միջև հարաբերությունները կարգավորված չեն ընտանեկան օրենսդրությամբ ... , ապա նման հարաբերությունների նկատմամբ ... կիրառվում են նույնպիսի հարաբերությունները կարգավորող ընտանեկան ... իրավունքի նորմերը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան ալիմենտի վճարման եղանակի փոփոխության պահանջով ոչ միայն այն դեպքում, երբ ալիմենտ վճարելու պարտավոր անձը մշտական բնակության համար մեկնում է օտարերկրյա պետություն, այլ նաև այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պարագայում օրենսդրությամբ նախատեսվում է ալիմենտի վճարման այլ եղանակ:

ԼՂՀ դատական պրակտիկայում ալիմենտի վճարման եղանակի փոփոխության պահանջը դիտվում է որպես ալիմենտի չափի փոփոխության պահանջ, և այդ հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Օրենսգրքի 107-րդ հոդվածը՝ համաձայն որի, ալիմենտի սահմանված չափը կարող է փոխվել միայն երկու պայմանների՝ կողմերից մեկի գույքային և

---

[1] Տե՛ս **Գ.Հ.Ղարախանյան,** Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք, Երևան, 2008, էջ 348

[2] Տե՛ս **Масевич М.Г.,** Права и обязанности родителей и детей, М., 1962, էջ 88

ընտանեկան դրության միաժամանակյա փոփոխության պարագայում: Սակայն, ալիմենտի վճարման եղանակի փոփոխությունը և ալիմենտի չափի փոփոխությունը տարբեր հասկացություններ են: Ալիմենտի վճարման եղանակի փոփոխությունը կախված է ալիմենտ վճարողի բնակության վայրի, եկամտի ձևի փոփոխությունից և այլ հանգամանքներից, իսկ չափի փոփոխության համար անհրաժեշտ է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրության միաժամանակյա փոփոխություն: Ալիմենտի վճարման եղանակի փոփոխությունը ***երբեմն կարող է*** հանգեցնել նաև չափի փոփոխության, բայց դա ալիմենտի վճարման եղանակի փոփոխության հետևանք է, այլ ոչ թե ալիմենտի չափի փոփոխություն:

Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ... ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո փոփոխվել է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրությունը, ապա դատարանը կարող է յուրաքանչյուր կողմի պահանջով փոփոխել ալիմենտի սահմանված չափը... : «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի[1] 44-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Վերոնշյալ երկու հոդվածների վերլուծությունից կարելի է փաստել, որ ալիմենտի չափի փոփոխության համար անհրաժեշտ է կողմերից մեկի և՛ գույքային, և՛ ընտանեկան դրության միաժամանակյա փոփոխություն:

Նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/0823/02/10 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ[2], համաձայն որի՝ դատարանն ալիմենտի չափը նվազեցնելու կամ ավելացնելու դեպքում պարտավոր է հաշվի առնել **ոչ միայն կողմերի ընտանեկան, այլ նաև նրանց գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի փոփոխությունը**...:

Այնինչ, ԼՂՀ վերաքննիչ դատարանը թիվ 1942/02/15 գործով կայացված որոշման համաձայն՝ ***անթույլատրելի է*** համարել Օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասին՝ ստորադաս դատարանի կողմից տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ դատական կարգով ալիմենտի չափը որոշելուց հետո այն փոփոխելու համար պարտադիր են կողմերից մեկի ինչպե՛ս գույքային, այնպե՛ս էլ ընտանեկան դրության փոփոխության մասին պայմանների միաժամանակյա առկայությունը: Նմանատիպ դիրքորոշում է արձանագրված նաև ԼՂՀ վերաքննիչ դատարանի թիվ 1862/02/15 որոշմամբ:

Այսպիսով, ԼՂՀ վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումները չեն բխում «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության և Օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի պա-

---

[1] Ընդունվել է 16.04.2008թ.: Տե՛ս ԼՂՀՊՏ 2008.06.12/21(93):
[2] Ընդունվել է 01.04.2011թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2011.06.08/33(836).1 Հոդ. 15:

հանջներից: Սակայն դրանք ուղղակիորեն մեջբերվում են ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռներում:

Բացի վերոհիշյալ խնդիրներից, դատական պրակտիկայում հաճախ հանդիպում ենք նաև գործեր, որոնցով հայցվորի պահանջն առանց հիմնավորման նվազեցվում է: Օրինակ՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ 1062/02/2015 գործով հայցադիմում է ներկայացվել 50.000 ՀՀ դրամ գումարի չափով ալիմենտ սահմանելու պահանջով, դատարանը ալիմենտ է սահմանել 35.000 ՀՀ դրամ գումարի չափով: Դատարանը հաշվի է առել, որ՝ երեխան մանկահասակ է, ունի հատուկ խնամքի անհրաժեշտություն, հայցվորը ստանում է 23.000 ՀՀ դրամ աշխատավարձ, պատասխանողն աշխատում է ՀՀ սահմաններից դուրս. նրա եկամտի մասին տեղեկություն չկա: Պատասխանողը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել և չի ներկայացել դատական նիստին: Իսկ թիվ 0766/02/2015 գործով հայցադիմում է ներկայացվել 2 երեխայի համար 60.000 ՀՀ դրամի չափով ալիմենտ սահմանելու պահանջով: Հայցը բավարարվել է մասնակի. 2 երեխայի համար սահմանվել է 40.000 ՀՀ դրամ գումարի չափով ալիմենտ: Վճռում նշված չէ պահանջվող ալիմենտի չափը նվազեցնելու որևէ հիմք, ընդհակառակը՝ պատասխանողը հայցն ընդունել է: Կարծում ենք, որ վերոնշյալ երկու գործերով խնդրարկվող ալիմենտի չափը նվազեցնելու հիմք դատարանը չի ունեցել:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի թիվ 1303/02/15 գործով հայցադիմում է ներկայացվել հօգուտ հայցվորի՝ նրա երրորդ երեխայի համար ալիմենտ բռնագանձելու պահանջով:

Նախկինում դատարանը վճիռ էր կայացրել հօգուտ հայցվորի խնամքին գտնվող երկու երեխաների ապրուստի համար ալիմենտ սահմանելու մասին: Վերոնշյալի վճռի հիման վրա դատարանը արձանագրել է. «*երկու երեխայի համար ալիմենտ գանձելու վերաբերյալ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին, միևնույն հիմքերով ալիմենտ գանձելու մասին վեճին վերաբերող օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում օրենսդիրը սահմանել է 107 հոդվածը, որով կարգավորվում է դատարանի սահմանած ալիմենտի չափը փոփոխելը*…»: Վճռում նշվել է, որ նման դիրքորոշում է հայտնել նաև ԼՂՀ վերաքննիչ դատարանը ԸԻԴ/1024/02/2014 գործով կայացված որոշմամբ: Վերոգրյալի հիման վրա գործի վարույթը կարճվել է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետի համաձայն՝ ըստ որի, դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, ***նույն առարկայի մասին միևնույն հիմքերով*** վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ … :

Նախ՝ պետք է արձանագրել, որ երրորդ երեխայի համար ալիմենտ բռնագանձելու ու առաջին երկու երեխաների համար ալիմենտ բռնագանձելու հայցապահանջների հիմքն ու առարկան տարբեր են: Այսպես, մի դեպքում ***<u>հայցի առարկան</u> երրորդ երեխայի համար ալիմենտ բռնագանձելու պահանջն է***, իսկ մյուս դեպքում՝ ***առաջին երկու երեխաների համար ալիմենտ բռնագանձելու պահանջը:*** Մի դեպքում ***<u>հայցի հիմք</u>*** հանդի-

սացող փաստ է պատասխանողի կողմից ***երրորդ երեխայի հայր ճանաչվելը,*** մյուս դեպքում՝ պատասխանողի կողմից ***առաջին երկու երեխաների հայր ճանաչվելը:*** Ուստի, կարծում ենք, տվյալ պարագայում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետի կիրառումը չի բխում ԼՂՀ օրենսդրության պահանջներից, քանի որ վերոնշյալ գործերով հայցի հիմքն ու առարկան տարբեր են:

Բացի այդ, գտնում ենք՝ սույն գործով Օրենսգրքի 107-րդ հոդվածը կիրառելի չէ: Տվյալ հոդվածի կիրառումը ենթադրում է երեխայի՝ ծնողից ապրուստի միջոց ստանալու իրավունքի սահմանափակում, քանի որ երեխայի ալիմենտ ստանալու իրավունքի իրականացումը կախման մեջ է դրվում կողմերից մեկի գույքային դրության փոփոխությունից, ինչի ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը: Իսկ երեխայի ալիմենտ ստանալու իրավունքը պայմանավորված չէ կողմերից մեկի գույքային դրության փոփոխությամբ: Այս պարագայում խախտվում է «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի[1] 8-րդ հոդվածը՝ համաձայն որի, յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք…:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք՝ ԼՂՀ ընտանեկան օրենսդրությունը տալիս է առաջադեմ և արդարացի լուծումներ երեխաների ապրուստը հոգալու ծնողների հավասար պարտականությունների մասին, սակայն դատական պրակտիկայում առկա են խնդիրներ, որոնց լուծումը առաջարկվում է սույն հոդվածում:

Լիլիթ Թադևոսյան

ԾՆՈՂԻՑ ԵՐԵԽԱՅԻ ՕԳՏԻՆ ԱԼԻՄԵՆՏԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ՈՒ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Բանալի բառեր՝ *ալիմենտ, բռնագանձում, չափ, եղանակ*

Սույն հոդվածը նվիրված է ծնողից երեխայի օգտին ալիմենտի բռնագանձման օրենսդրական կարգավորման մեխանիզմներին ու դատական պրակտիկայում ծագող խնդիրներին, մասնավորապես՝ ալիմենտի վճարման եղանակի և չափի փոփոխության հասկացությունների տարանջատմանը, ալիմենտի չափի փոփոխության համար անհրաժեշտ պայմանների առկայությանը դատական պրակտիկայում տրվող մեկնաբանությանը, դատարանի կողմից ալիմենտային պահանջների նվազեցմանը, ալիմենտային հայցերի հիմքի և առարկայի մասնավորեցմանն ու տարբերակմանը:

[1] Ընդունվել է 14.05.2008թ.: Տե՛ս ԼՂՀՊՏ 2008.06.12/21(93):

Лилит Тадевосян

ВЗЫСКАНИЕ АЛИМЕНТОВ С РОДИТЕЛЯ НА РЕБЕНКА: ЗАКОНОДАТЕЛЬНОЕ РЕГУЛИРОВАНИЕ И СУДЕБНАЯ ПРАКТИКА

Ключевые слова: *алимент, взыскание, размер, способ*

Эта статья посвящена механизмам законодательного регулирования и проблемам судебной практики связанные с взысканием алиментов с родителя на ребенка, в частности, различению понятий порядка и формы предоставления содержания несовершеннолетним детям. В статье также рассматриваются судебные комментарии о наличии необходимых условий для изменения размера содержания и другие вопросы.

Lilit Tadevosyan

LEGISLATIVE REGULATION AND JUDICIAL PRACTICE OF THE COLLECTING CHILD SUPPORT

Key words: *alimony, recovery, measure, mode*

This article is dedicated to the legislative regulation and the problems of judicial practice of collecting child support from a parent: in particular, it refers to the distinction between the concepts of order and form of collecting child maintenance. The article also discusses judicial comments about conditions for the change of the amount of the child support and other issues regarding to the child support.